ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 04-Ա

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 01.02.2017Թ. ԹԻՎ 02 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարմարաշեն համայնքի ավագանու թիվ 02 նիստի օրակարգը

1. ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2016 Թ._Ի ԹԻՎ 41_Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

3.ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 Թ. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՍԵՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ
6. ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ
7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 05_Ն

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԱՎԱԳԱՆՈՒ 19.12.2016 Թ._Ի ԹԻՎ 41_Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ, 14-րդ հոդվածների, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետի , <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1) 1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝.

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15000 /տասնհինգ հազար / դրամ.
բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝30000/ երեսուն հազար/ դրամ.
- 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար/ դրամ.
-1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50000 /հիսուն հազար / դրամ.
-3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100000 /հարյուր հազար /դրամ.
գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝
- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3000 /երեք հազար / դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5000 / հինգ հազար/ դրամ:

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող

դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3000 / երեք հազար/ դրամ.

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար՝ 5000 / հինգ հազար/ դրամ.

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար, օրացույցային տարվա համար՝ 200000 /երկու հարյուր հազար/ դրամ.

5. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում, կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առեւտրի կետերում, կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 60000 /վաթսուն հազար/ դրամ.

6. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առուվաճառք իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 50000 /հիսուն հազար դրամ.

7.համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6700 /վեց հազար յոթ հարյուր/ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամից՝ 10001 /տաս հազար մեկ/ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամից՝ 13330 /տասերեք հազար երեք հարյուր երեսուն/ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 / քսանհինգ հազար/ դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /քառասունհինգ հազար/ դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10000 /հարյուր հազար/ դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար, յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6 700 /վեց հազար յոթ հարյուր/ դրամ.

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10001 /տաս հազար մեկ/ դրամ.

- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13330 /տասներեք հազար երեք հարյուր երեսուն/ դրամ.

- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.

- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45000 /քառասունհինգ հազար /դրամ.

- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 100000 /հարյուր հազար / դրամ.
8. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.
9. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացույցային տարվա համար.
ա. առևտրի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 25000 /քսան հինգ հազար/ դրամ.
10. համայնքի վարչական տարածքում՝ համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝
ա. հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր / դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 6000 /վեց հազար /դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 12000 /տասներկու հազար/ դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16000 /տասնվեց հազար / դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 35000 /երեսունհինգ հազար / դրամ.
բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1000 / հազար / դրամ.
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2000 /երկու հազար / դրամ.
- 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4000 / չորս հազար / դրամ.
- 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 8000 / ութ հազար/ դրամ.
- 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.
- 501 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 25000 / քսանհինգ հազար / դրամ.
11. ավագանու կողմից սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի և միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝
ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.
բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝35000 / երեք հազար հինգ հարյուր/ դրամ.
գ. սոցիալական գովազդի համար՝ 0 /զրո/ դրամ.
դ. այլ արտաքին գովազդի համար՝1500 / հազար հինգ հարյուր / դրամ.
ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով՝ 375 /երեք հարյուր յոթանասունհինգ/ դրամ.
զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով՝ 150 /հարյուր հիսուն/ դրամ :

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան՝ ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝ 100000 /հարյուր հազար/ դրամ.
13. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար, օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10000 /տաս հազար / դրամ.
14. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝500000 / հինգ հարյուր հազար/ դրամ:
15. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար, օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար/ դրամ.

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 5000000 /հինգ միլիոն/ դրամ.

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝7000000 / յոթ միլիոն / դրամ.

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ 10000000 /տաս միլիոն / դրամ:

16. համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 3000 /երեք հազար/ դրամ.
17.ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով /շահագործման թույտվություն/ փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 5000 /հինգ հազար/
18 համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 3000 /երեք հազար/ դրամ.
19.համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ.
20.համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 3000 /երեք հազար/ դրամ..
21.համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճարը համայնքի ավագանու կողմից սահմանվում է «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և դրույքաչափերի սահմաններում՝ 0 /զրո / դրամ.
22. համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի չափը ՝ համայնքի բնակիչների համար՝ 5000 /հինգ հազար / դրամ , այլ համայնքների բնակիչների համար 10000 /տաս հազար/ դրամ.

- 1-ին ,2-րդ, 3-րդ կետերի նկատմամբ կիրառել 0,5 գործակիցը
- 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 13-րդ կետերի նկատմամբ կիրառել 0,3 գործակիցը
- Երևան-Մեղրի և Մարմարաշեն-Մասիս ճանապարհները համարել I գոտի և այդ գոտում գտնվող գազալցակայաններում սեղմված գազերի վաճառքի թույտվության համար կիրառել 0.75 գործակիցը:

2) Ուժը կորցրած ճանաչել ավագանու 19.12.2016 թ.-ի թիվ 41-Ն որոշումը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

6. ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

8. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 06-Ն

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով .

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Մարմարաշեն համայնքի աշխատակազմում արված գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ
3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ
4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ
5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ
6. ՍԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ
7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ
8. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Մարմարաշեն համայնքի ավագանու
2017 թ. Փետրվարի 7-ի թիվ 06-Ն որոշման

N	Համայնքի աշխատակազմի հիմնական միջոցներ	քանակ	գումար
1	Համայնքապետարանի շենք	1	13075694
2	Կապի հանգույց	1	300414
3	Բաղնիքի շենք	1	933228
4	Կարտոֆիլի պահեստ	1	524091
5	Գազագիծ	616 /մ/	5998800
6	Կախիչ	2	292
7	Գրասեղան	1	962
8	Դրամարկղ երկաթյա	2	676
9	Դրամարկղ երկաթյա	1	246
10	Դրամարկղ երկաթյա	1	277
11	Դրամարկղ երկաթյա	1	200
12	Բջջային հեռախոս	1	58500
13	Ենթակայան 410 ԿՎԱ	1	9295885
14	Տրանսֆորմատոր OMN 410	1	555600
15	Ենթակայան ԿՏԵ 250/10	1	7979200
16	Սառնարան Սամսունգ	1	207000
17	Ջրատաքացուցիչ <<Նովա>>	1	50000
18	Հեռուստացույց <<Էլ-Ջի>>	1	117000
19	Տակդիր հեռուստացույցի	1	32000
20	Համակարգիչ <<Պենտիում-4>>	1	432000
21	Պրինթեր	1	253000
22	Սեղան համակարգչի	2	58000
23	Խոլը կոմպլեկտ	1	222000
24	Բազկաթոռներ համակարգչի	4	150000
25	Գրապահարաններ	5	168000
26	Գրասեղաններ	7	210000
27	Խմելու ջրագիծ	770 մ	7940320
28	Գլխավոր հատակագիծ	1	3950000
29	Բազկաթոռ գյուղապետի	1	70000
30	Սեղան խորհրդակցության	1	300000
31	Օդորակիչ <<Բեկո>>	1	390000
32	Օդորակիչ <<Բեկո>>	1	207000
33	Փոշեկուլ	1	69000
34	Սառնարան Բեկո	1	121000
35	Տրակտոր YTOX 804	1	2600000
36	Կցասայլ տրակտորի	2	1282000
37	Օդորակիչ <<Բեկո>>	1	231000
38	Գիշերային լուսավորության ցանց	750 մ	39291070
39	Գրասեղան	2	96200
40	Գրապահարան	1	300000
41	Ավտոմեքենա <<Հոնդայի>>	1	7750000
42	Գազաբալոն ավտոմեքենայի	1	420000
43	Համակարգիչ	5	870000
44	Տպիչ	4	442500

45	Համակարգիչ	1	215000
46	Բազկաթոռներ	4	100000
47	Դրամարկղ երկաթյա	1	208
48	Ստաբիլիզատոր	3	75000
49	Վայֆայ	1	25000
50	Ռոգման ցանց	1	4375100
51	UPS	7	195000
52	Քարտրիչ	5	172000
53	Ջրի պոմպ	2	55000
	Ընդամենը		112165463

Կուլտուրայի տուն

N	հիմնական միջոցներ	քանակ	գումար
1	Կուլտուրայի տան շենք	1	672930
2	Գրասեղան	2	308
3	Գրապահարան	1	308
4	Գրապահարան	2	646
5	Աթոռ թաթերական	80	38800
	Ընդամենը		712992

Գրադարան

N	Գրադարան հիմնական միջոցներ	քանակ	գումար
1	Ընթերցասեղան	2	362
2	Պահարան	2	616
3	Պոլկա երկաթյա	19	1672
4	Կատալոգ արկղ	1	231
5	Գրականություն	-	4000
	Ընդամենը		6881

Համայնքապետարանի շրջանառու միջոցներ

N	Համայնքապետարանի շրջանառու միջոցներ	քանակը	գումար
1	Կալկուլյատոր	5	10000
2	Աթոռներ փափուկ	16	128000
3	Աղբարկղ	5	10000
4	Հեռախոս թվային	1	5000
5	Տրայնիկ շնորհով	3	6000
6	Շերտավարագույր	24	144000
	Ընդամենը		303000

Կուլտուրայի տուն

N	Կուլտուրայի տան շրջանառու միջոցներ	քանակ	գումար
1	Հայելի	1	77

2	Կախիչ	1	77
3	Կառնեզ	1	385
	Ընդամենը		539

Գրադարան

N	Գրադարանի շրջանառու միջոցներ	քանակ	գումար
1	Վարագույր	2	3465
2	Սեղան	1	169
3	Էտաժերկա	2	285
4	Աթոռ կիսափափուկ	2	192
5	Ցուցափեղկ	2	362
6	Կառնեզ	2	23
	Ընդամենը		4496

Համայնքի ղեկավար՝ Է. Հակոբյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մարմարաշեն համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Մարմարաշեն, (0236) 6-46-25, hakobyan.edik@yandex.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 ՓԵՏՐՎԱՐԻ 2017թվականի N 07-Ա

ՄԱՐՄԱՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 Թ. ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության օրենքի <<Գույքահարկի մասին>> օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թ. հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշման պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Մարմարաշեն համայնքի ներքոհիշյալ բնակիչների համար գույքահարկի գծով սահմանել արտոնություններ 595250 /հինգ հարյուր իննսունհինգ հազար երկու հարյուր հիսուն/ դրամի չափով՝ համաձայն ցուցակի:

Ա. Ա. Հ.	Մեքենայի մակնիշը	Մեքենայի պետ. Համարանիշը	Արտոնության գումարի չափը
Մրտեյան Խաչիկ	VAZ 21070-120	34 UC 417	8500
2Արղումանյան Թաթուլ	VAZ 21053	34 ZV 461	8500
3Բարության Տիգրան	VAZ 21063	27 SU 680	7600
4Կարապետյան Պետրոս	VAZ 2106	07SL 662	8800
5Պետրոսյան Ալբերտ	GAZ 24	34 CV 952	8300
6Նարինյան Գևորգ	VAZ 2102	34 SV 426	7050
7Նարինյան Արա	VAZ 21074	34 MP 341	8800
8Սիմոնյան Դավիթ	VAZ 21011	34 MM 776	6350
9Եղիազարյան Գևորգ	VAZ 21063	34 PA 682	7600
10Պիրվերդյան Գրիգոր	VAZ 21099	15 RP 100	7700
11Հարությունյան Կարեն Մ.	GAZ 2705	34 PFO 254	5500
12Սահակյան Սարգիս	VAZ 2101	33 DO 976	7600
13Ղազարյան Պատվական	GAZ 3110	34 AD 541	11000

14Ասոյան Խորեն	VAZ 21063	34 PD 085	7600
15Գևորգյան Ղուկաս	VAZ 2102	27 DD 017	7050
16Հասանյան Ռոման	VAZ 21099	45 PU 555	9900
17Միրզոյան Մարինե	VAZ 21061	34 FU 374	8500
18Բեյլերյան Վարդան	VAZ 21063	10 SS 827	7600
19Գրիգորյան Վաչագան	VAZ 21099	34 LM 137	8500
20Գալստյան Գուրգեն	VAZ 2107	18 UL 785	8150
21Առաքելյան Մայիս	VAZ 2101	35 AC 489	4750
22Ղազարյան Գեղամիկ	GAZ 322132	34 MO 637	5500
23Սարոյան Գագիկ	GAZ 31100	34 QT 691	4950
24Դանոյան Ռազմիկ	VAZ 2121	08 US 600	8800
25Լևոնյան Ժիրայր	VAZ 21061	35 AC 444	4950
26Ադումյան Արտակ	VAZ 21099	35 UP 274	7800
27Մստոյան Մայիս	VAZ 21214	35 PS 992	8800
28Սահակյան Լեոնիկ	VAZ 2106	34 QU 602	8800
29Սարգսյան Մարտին	VAZ 21093	15 MM 444	7700
30Ազիզյան Արշակ	VAZ 21061	33 TT 082	8500
31Տիգրանյան Խաչատուր	VAZ 21061	34 TU 466	8500
32Դանոյան Խաչատուր	VAZ 21063	24 LU 216	7600
33Պետրոսյան Կարինե	Մոսկվիչ 412	08 UL 421	8300
34Գևորգյան Սուրիկ Ս.	VAZ 21140	35 CA 512	8500
35Դանոյան Վալեր	VAZ 2106	34 QA 029	8800
36Փաշոյան Աբով	VAZ 21099	41 TL 001	8400
37Գևորգյան Հովսեփ	VAZ 21121	34 QU 295	5950
38Ավագյան Ալվարդ	VAZ 210630	27 LS 991	7600
39Խաչատրյան Կարեն	VAZ 2106	34 FF 790	8800
40Ավագյան Գևորգ	VAZ 21063	27 SS 033	7600
41Կարապետյան Գագիկ	GAZ 2705	17 UL 985	7700
42Սուքիասյան Գագիկ	VAZ 2106	34 CO 851	8800
43Ենոքյան Նորիկ	VAZ 21063	20 US 435	7600
44Փաշոյան Աշոտ	VAZ 21102	34 QZ 482	8800
45Թիլիքյան Տարոն	VAZ 21150	34 FM 086	8500

46Գապրիելյան Արամ	VAZ 2107	33 LT 243	8500
47Առաքելյան Սանասար	VAZ 2106	33 DS 274	8800
48Գրիգորյան Սուրիկ	VAZ 21061	33 DL 373	7700
49Պողոսյան Խաչիկ	VAZ 21061	30 LU 116	8500
50Գրիգորյան Վաչագան	VAZ 2102	34 ZU 254	6400
51Գասպարյան Արամ	VAZ 21065	34 VO 221	8500
52Առաքելյան Դավիթ	VAZ 21063	27 LU 171	7600
53Տիգրանյան Տիգրան	VAZ 2106	34 MU 955	8500
54Առաքելյան Սերյոժա	VAZ 2106	34 ON 155	6600
55Կարապետյան Պետրոս	VAZ 21703	35 CZ 765	10800
56Հասանյան Ալիֆ	GAZ 3102-321	35 UP 350	11100
57Գևորգյան Լևոն	VAZ 21063	27 LS 045	7600
58Մարգարյան Մարտին	GAZ 24	34 CL 943	10500
59Աղոյան Ապեր	VAZ 21099	25 US 901	7150
60Ղուկասյան Զոհրաբ	VAZ 2106	34 DO 561	8800
61Ենոքյան Անդրանիկ	VAZ 2107	34 LF 624	8500
62Ասոյան Արսեն	VAZ 21063	15 AT 100	7600
63Հարությունյան Մարզպետ	VAZ 2106	22 LU 717	8800
64Հայրապետյան Հրանտ	VAZ21063	31 LL 371	7600
65Սիմոնյան Աղասի Վ.	VAZ 2107	34 RF 012	7900
66Հակոբյան Վարդան	GAZ31105	27 UU 805	11100
67Ավագյան Գոռ	VAZ2106	01 OU605	8800
68Պողոսյան Վաչագան	VAZ21200	34DF304	8800
69Պետրոսյան Մուշեղ	VAZ21011	27 SU 877	7600
70Ղալիջանյան Սամվել	VAZ21063	27 LS 512	7600
71Սարգսյան Աշոտ	VAZ21063	O600015	7600
72Հովհաննիսյան Հովհաննես	VAZ21063	34TU185	7600
73Արոյան Ղազար	VAZ21063	04LS857	7600
74Գալստյան Սամվել	VAZ2103	27 LL 885	8500
Ընդամենը			595250

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

3. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԿԱՐԵՆ

4. ՄՈՒՐԱԴՅԱՆ ԳԱՌՆԻԿ

5. ՍԱՖԱՐՅԱՆ ՌՈՒԲԻԿ

6. ՄԵՐՈԲՅԱՆ ԼԻՊԱՐԻՏ

7. ՕՀԱՆՅԱՆ ԱՐՏԱԿ

8. ՕՀԱՆՅԱՆ ՆԱՐԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԷԴՎԱՐԴ ՀԱԿՈԲՅԱՆ